



## ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի միջև ստորագրվեց գիտական համագործակցության համաձայնագիր

Ս.թ. հունիսի 26-ին Չեռնոգորիայի մայրաքաղաք Պոդգորիցայում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի միջև ստորագրվեց գիտական համագործակցության համաձայնագիր: Համաձայնագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը և Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Դրագան Վուկչևիչը:

Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է գիտնականների և մասնագետների փոխանակում՝ ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով, երկու երկրների շահագրգիռ հաստատությունների և կազմակերպությունների միջև համատեղ նախագծերի խրախուսում, համատեղ գիտաժողովների, սիմպոզիումների և սեմինարների կազմակերպում, կրթական և գիտական տեղեկության և փաստաթղթերի փոխանակում, ակադեմիկոսների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ նախաձեռնությունների իրականացում ակադեմիաների իրավասությունների շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գ/ա կենտրոնում

Ս.թ. հուլիսի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և ավստրիական «ԳեեԿո ԻՆՏ.Ս.» ընկերության միջև կնքվեց համագործակցության պայմանագիր:

Պայմանագրի շրջանակներում ավստրիական ընկերության ներդրումային ծրագրի միջոցներով նախատեսվում է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում կազմակերպել գեղարարական և սննդային նշանակության բուսական յուղերի, լուծամզվածքների, եթերայուղերի արտադրություն:

Պայմանագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն Ավետիս Ծատուրյանը և «ԳեեԿո ԻՆՏ.Ս.» ՍՊԸ-ի տնօրեն Արիս Սեդրակյանը:

...

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում ստացվել է կաթնաթթվային բակտերիաների նոր շտամ, որը թույլ է տալիս բարձրացնել սառնարանային պայմաններում պահպանվող մսամթերքի կենսաանվտանգությունն ու երկարացնել պահպանման ժամկետն առանց զգայունաբանական բնութագրի՝ համի, հոտի, տեսքի որևէ փոփոխության:

«Մեր կողմից անջատվել է կաթնաթթվային բակտերիաների նոր շտամ՝ ներօժտված ջրածնի պերօքսիդի կենսասինթեզի բարձր ակտիվությամբ: Ստացված մանրէները համեմատաբար ավելի փոքր քանակությամբ թույլ են տալիս բարձրացնել սառնարանային պայմաններում պահպանվող մսամթերքի կենսաանվտանգությունն ու երկարացնել պահպանման ժամկետն առանց զգայունաբանական բնութագրի որևէ փոփոխության», - ասաց գիտական խմբի ղեկավար, կենտրոնի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զարյա Զովհաննիսյանը:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են միջազգային հետևյալ գիտաժողովներում: Աշխատանքի լայնածավալ տարբերակն ուղարկվել է տպագրության ազդեցության բարձր գործակից ունեցող, SJR ցանկում ընդգրկված հեղինակավոր «AMB Express» ամսագիր:

Հետազոտական աշխատանքներին մասնակցել են կենսաբանական գիտությունների թեկնածուներ Լուսինե Դանիելյանը, Անդրանիկ Բարսեղյանը և ասպիրանտ Էլեն Գաբրիելյանը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒՆՅԱՆԻ ՏՈՏԱԼ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ Է ԵՎ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ Է ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՑ

1988 թ., երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) բարձրագույն օրենսդիր մարմինը՝ մարզային խորհուրդը, ինքնորոշվեց Հայաստանի խորհրդային Հանրապետությանը միանալու օգտին, նպատակը մեկն էր՝ Արցախի բնակչության՝ իր պատմական հայրենիքում ազգային ինքնության պահպանությամբ ազատ ապրելը և արարելը: Խորհրդային Ադրբեջանի ենթակայությամբ Արցախի հայ բնակչության արարման հնարավորությունները խիստ սահմանափակված և վերահսկելի էին խորհրդային քաղաքական բռնաճնշումների մեթոդների բազմաթիվ ձևերով: Խորհրդային Ադրբեջանում գտնվելու ողջ ընթացքում հայկական անկլավի բնակչությունը արտագաղթում էր, և անկլավը լցվում էր էթնիկ ադրբեջանցիներով: Չնայած Հայաստանին միանալու Արցախի բնակչության ցանկությունը պատժվում էր, անցյալ հարյուրամյակում այդ ցանկությունը արտահայտվել է բազմիցս ԽՍՀՄ իշխանություններին դիմումներով, կոլեկտիվ մամակներով և այլն:



ԽՍՀՄ վերակառուցման քաղաքական որոշումը նոր հույսեր տվեց: 1988 թ. Արցախի հայերն իրենց երազանքը ձևակերպեցին ինքնորոշման սահմանադրական իրավունքով: Հայերի սահմանադրական իրավունքին Ադրբեջանի քաղաքական իշխանությունները հակադրեցին վախճանելու փորձված մեթոդը՝ Ադրբեջանի էթնիկ հայերի ջարդերը և դեպորտացիան: Վերակառուցվող ԽՍՀՄ-ը չհասցրեց ընթերցել համամարդկային հունանիտար զարգացումներին ինտեգրվելու բարդ ընթացքին: Ադրբեջանի իշխանությունների արագընթաց նախաձեռնությունները ոչ քաղաքական, ոչ իրավական հակադրություններ չստացան: 1991 թ. վերջին՝ ԽՍՀՄ-ի կազմալուծման շրջանում, Արցախի հայությունը դեմ դիմաց մնաց Ադրբեջանի բազմաշերտ, գլխավորապես շովինիստական ռազմական կազմավորումների առաջ:

1992-1993 թթ. ծանր շրջափակման մեջ հայտնված Արցախի հայերը գերագույն ջանքերով կարողացան համախմբվել և դիմադրել Ադրբեջանը փաստացի կառավարող ռազմական խմբավորումներին:

Անցած 30 տարիների ընթացքում՝ մինչև 2020 թ. սեպտեմբեր, Արցախի հայությունը, անցնելով ջարդերի, շրջափակումների, կռիվների բազում փորձություններով, պատերազմի մշտական սպառնալիքի տակ ստեղծեց իր ինքնավարությունը՝ ժամանակակից ժողովրդավարական մոդելի իր անկախ ժողովրդավարական հանրապետությունը, վերակառուցեց ավերված բնակավայրերը, կառուցեց ճանապարհներ, տնտեսություն, կրթական և սոցիալական ծառայություններ, դատաիրավական համակարգ:

2020 թ. սեպտեմբերին Արցախի խաղաղ բնակչության գլխին պայթեց նոր պատերազմ, որն ավարտվեց արտաքին օժանդակությունից օգտվող Ադրբեջանի հաղթանակով:

Ձեռնպահ մնալով պատերազմի մասին քաղաքական գնահատականներից՝ չենք կարող լռել դրա դադարի այսպես կոչված հետևանքների մասին: Այդ պատերազմի ավարտի հետևանքները և մինչև այսօր տևող դադարը չափազանց ազդեցիկ և վտանգավոր են ինչպես Արցախի հայկական իշխանությունների վարչական կառավարման տակ գտնվող, այնպես էլ Հայաստանի Հանրապետության՝ Ադրբեջանին սահմանամերձ տարածքների բնակչության համար:

Արցախի կրկին հայտնվել է ադրբեջանական բանակի տոտալ շրջափակման մեջ: Արցախի հայ բնակչությանը Հայաստանին կապող միակ՝ կյանքի ճանապարհը փակ է 2022թ. դեկտեմբերի 12-ից: Վերջին շաբաթը՝ նույնիսկ Կարմիր խաչի համար: Արցախ ոչինչ չի մտնում՝ ոչ սնունդ, ոչ դեղորայք, անջատված է գազի մատակարարումը, շուտով կսպառվի նաև ջրամատակարարումը:

Այսօր Արցախի հայ բնակչությունը դիմում է աշխարհին՝ հայտարարելով. «Մենք՝ Արցախի բնիկ ժողովուրդը, իրավունք ունենք մեր հողի վրա ապրելու»: Ոչ ոք նրանց իրավունքը չի վիճարկում: Պարզապես Ադրբեջանն այդ իրավունքի իրացման հնարավորությունը չի տալիս. «Ապրեք, որքան կարող եք, առանց սննդի, առանց ջրի, առանց ջեռուցման, առանց անտառի փայտի, առանց աշխարհի հետ կապի: Ապրելու ձեր իրավունքը սա՛ է»:

Մենք՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցներս, դիմում ենք աշխարհի մեր գործընկերներին՝ նկատելու, տեսնելու և ուշադրություն դարձնելու այս հումանիտար աղետին: Առկա լուրջությունը հավասարազոր է Արցախի հայ բնակչության ապրելու այս «իրավունքին»՝ Ադրբեջանի իշխանությունների գործողություններին հավանություն տալուն:

**ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների աշխատակիցներ**

# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համար հոբելյանական այս տարվա ընթացքում լրանում են նաև մեր մի շարք անվանի գիտնականների ծննդյան 100-ամյա հոբելյանները:

1943 թ., երբ կազմավորվեց ՀԽՍՀ ԳԱ-ն, նրանք ընդամենը 20 տարեկան էին. ոմանք Մեծ հայրենականի ռազմադաշտում էին, մյուսները դեռևս ուսանողներ էին: Հետագայում իրենց ողջ կյանքն ու գործունեությունը նրանք նվիրաբերեցին գիտությանը: Գիտական և գիտակազմակերպչական արգասաբեր գործունեության շնորհիվ նրանք արժանացան մեր երկրի գիտական բարձրագույն՝ ԳԱ ակադեմիկոսի կոչման: Վաստակաշատ գիտնականները շոշափելի ներդրում ունեցան ակադեմիական գիտության զարգացման գործում:

Փորձենք սեղմ ներկայացնել նրանց բովանդակալից կյանքի կարևորագույն դրվագները:

Կառավարման պրոցեսների հայտնի մասնագետ, պետական-հասարակական գործիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը (1923-2010) երկար տարիներ եղել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1963-1977), ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ (1977-1989), ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1989-1993): 1993թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ և այդ պաշտոնում աշխատել մինչև 2006թ.:

Նշանավոր ֆիզիկոս Միքայել Լևոնի Տեր-Միքայելյանը (1923-2004) աշխատել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, ԵՊՀ-ում, ավելի քան քառորդ դար ղեկավարել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը (1967-1994), որն այժմ կրում է նրա անունը:

Քիմիայի բնագավառի ճանաչված մասնագետներ Ստեփան Գրիգորի Մացոյանը (1923-2010) գլխավորել է ՀԽՍՀ ԳԱ

օրգանական քիմիայի ինստիտուտը (1967-1988), իսկ Վռամ Վաղինակի Դովլաթյանի (1923-2005) ողջ գործունեությունն ընթացել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում (ամբիոնի և լաբորատորիայի վարիչ):

Մեծանուն գրականագետ Էդվարդ Մկրտչի Ջրբաշյանը (1923-1999) երկար տարիներ աշխատել է ԵՊՀ-ում, երկու տասնամյակից ավելի (1977-1999) եղել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն: Հայ գրականության պատմությանը նվիրված բազմաթիվ արժեքավոր մենագրությունների հեղինակ է:

Անվանի մաթեմատիկոս Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը (1923-1988) աշխատել է ԵՊՀ-ում՝ որպես ամբիոնի վարիչ և մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկավար, ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի տնօրեն, Մաթեմատիկայի ինստիտուտի բաժնի վարիչ:

Մեր ակադեմիկոսների գործունեությունը գնահատվել է հավուր պատշաճի: Նրանք արժանացել են գիտական պատ-



Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ




Մ. Լ. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Ս. Գ. ՄԱՑՈՅԱՆ



Վ. Վ. ԴՈՎԼԱԹՅԱՆ



Է. Մ. ՋՐԲԱՇՅԱՆ




Ռ. Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ

վավոր կոչումների, պետական մրցանակների և կառավարական բարձր պարգևների: Նրանցից յուրաքանչյուրն իր բնագավառում թողել է անջնջելի հետք և զբաղեցրել պատվավոր տեղ հայրենի գիտության պատմության մեջ:

«Գիտություն» թերթի խմբագրություն

Հ.Գ. ՆՄԱՆ հոբելյանները լավագույն առիթն են հիշելու մեր գիտության երախտավորներին, արժևորելու նրանց վաստակը: Բնականաբար այս փոքր ակնարկում հնարավոր չէր ներկայացնել նրանց գիտական և գիտակազմակերպչական լայնածավալ գործունեության թեկուզ և փոքր մասը: Նման շնորհակալ գործի նախաձեռնողները, անտարակույս, պետք է լինեն մեր գիտական կազմակերպությունները և համապատասխան բնագավառների ճանաչված մասնագետները, որոնք առավել հաջողությամբ կարող են իրականացնել այն՝ իրենց պատրաստած նյութերը ժամանակին ներկայացնելով խմբագրություն:

## ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի գիտական նոր արդյունքները



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտում ստացված գիտական արդյունքները կարող են օգտագործվել մեքենաշինության, ինքնաթիռաշինության և տեխնիկայի այլ բնագավառներում տարբեր տիպերի լարումների կենտրոնացուցիչներ պարունակող կառույցների, կառուցվածքների և նրանց դետալների նախագծման աշխատանքներում և դրանց ամրության ու հուսալիության հաշվարկներում:

«Ստացված արդյունքներն ունեն թե՛ հիմնարար, թե՛ կիրառական կարևոր նշանակություն: Դրանք կարող են ծառայել որպես ուղեցույց նոր ստատիկ և դինամիկ կոնստիտուցիոն և խառը եզրային խնդիրների ուսումնասիրման համար, ինչպես նաև օգտագործվել կոնստիտուցիոն և խառը

խնդիրների վերաբերյալ հատուկ դասընթացներում: Կիրառական տեսանկյունից ստացված արդյունքները կարող են օգտագործվել մեքենաշինության, ինքնաթիռաշինության և տեխնիկայի այլ բնագավառներում հաճախ հանդիպող, այս կամ այն պատճառներով միաժամանակ տարբեր տիպերի լարումների կենտրոնացուցիչներ պարունակող կառույցների, կառուցվածքների և նրանց դետալների նախագծման աշխատանքներում և դրանց ամրության ու հուսալիության հաշվարկներում»,- ասաց գիտական խմբի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Հակոբյանը:

Ուսումնասիրվել են լայն դասի նոր, ստատիկ և դինամիկ կոնստիտուցիոն և խառը եզրային խնդիրներ: Կառուցվել են դրանց ճշգրիտ կամ արդյունավետ լուծումները: Արդյունքում բացահայտվել են լարումների կենտրոնացուցիչների շրջակայքում առաջացած արագ փոփոխվող լոկալ ինչպես ստատիկ, այնպես էլ դինամիկ լարվածային դաշտերի փոփոխման, նաև լարումների կենտրոնացուցիչների փոխազդեցության օրինաչափությունները:

Վահրամ Հակոբյանի և համահեղինակների՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ավետիք Սահակյանի, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուներ Լիլիթ Դաշտոյանի, Հարություն Ամիրջանյանի և Լուսինե Հակոբյանի կողմից ստացված արդյունքները գե-

կուցվել են Հայաստանում և արտասահմանում կայացած միջազգային գիտաժողովներում: Արդյունքներն ամփոփվել են պրոֆեսոր Հակոբյանի «Լարումների կենտրոնացուցիչները դեֆորմացվող հոծ մարմիններում» («Stress Concentrators in Continuous Deformable Bodies») մենագրության մեջ, որը տպագրվել է «Springer» հրատարակչությունում: Մենագրությունը նվիրված է համասեռ ու կտոր առ կտոր համասեռ մասի մարմինների և նրանցում միաժամանակ առկա ճաքերի, դրոշմների, մասամբ կամ լրիվ ամրակցված բացարձակ կոշտ ներդրակների և առածական վերադիրների տիպի լարումների կենտրոնացուցիչների փոխազդեցության հարցերին: Մենագրությունը ստացել է դրական արժագանք հայրենական և միջազգային գիտական հանրության կողմից:

Արդյունքների մասին աշխատանքներ են տպագրվել նաև մի շարք հանդեսներում և թեմատիկ ժողովածուներում:

Գիտական արդյունքները ստացվել են ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում բազային ֆինանսավորմամբ իրականացվող «Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտական կոմիտեի տրամադրած միջազգային և տեղական թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

## Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Յու. Սուվարյան - Հայկական պետականության կառավարչական հիմնախնդիրները:
2. А.Бекарян - Армения в судьбе Джорджа Байрона.
3. Գ. Պողոսյան - Ռուսաստանի հայկական սփյուռքի հայրենադարձության ներուժը:
4. «Լեւոն Արքայի Աղալովյան. Կենսամատենագիտություն»:
5. «Լեզու և լեզվաբանություն», 2022 թ., № 2:
6. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտակազմակերպական գործունեության 2022 թ. հիմնական արդյունքներ. Հաշվետվություն:
7. Լ. Թեյան - Հայերենագիտական ուսումնասիրություններ:
8. Հեղ. խումբ - «Նոր բառեր», պր.2:
9. Г. Погосян - Историческая память и национальная идентичность.
10. «Կարիմե խուդաբաշյան. Կենսամատենագիտություն»:
11. Ֆ. Բախչինյան - Ֆադեյ Սարգսյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ):
12. А. Агасян - Стихотворения. Русская лира (переводы).
13. «Բանբեր հայագիտության», 2023 թ., № 1:
14. «Պատմաբանասիրական հանդես», 2023 թ., №2:

## ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ



է ենթագետիկ և անվտանգության առումով, նա միակ հուսալի ռազմավարական դաշնակիցն է: Հայ-ռուսական ավանդական հարաբերությունները մշակութային, պատմական և հումանիտար առումներով իրենց հավասարը չունեն:

Հայաստանում կատարված հասարակական կարծիքի բազմաթիվ սոցիոլոգիական հարցումները հստակ պատկերացում են տալիս Ռուսաստանի նկատմամբ մեր բնակչության վերաբերմունքի մասին: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը (սոցիոլոգիական հարցումների համաձայն՝ մոտ 75-80%) հետևողականորեն Ռուսաստանին վերաբերվել է որպես բարեկամի և վստահելի գործընկերոջ: Ամերիկյան Միջազգային համալսարանի ինստիտուտի (IRI)

գործվում է մեր հակառակորդների կողմից՝ հայ-ռուսական հարաբերությունները վարկաբեկելու նպատակով: Արդյունքում մեր բնակչության մեջ հակառուսական տրամադրություններն աճում են: Դրանով է բացատրվում Ռուսաստանի նկատմամբ վստահության որոշակի անկումը: Նվազել է Ռուսաստանն առաջին տեղում մշտողների մասնաբաժինն այն երկրների շարքում, որոնց հետ Հայաստանը պետք է իր բարեկամական հարաբերությունները պահպանի: Ընդ որում այդ նվազումը համընկնում է հարևան Իրանի (32,7%), Ֆրանսիայի (25,2%) և ԱՄՆ-ի (23,0%) նկատմամբ վստահության աճով: Մինչդեռ Թուրքիան և Ադրբեյջանը մշտապես մատնանշվել են որպես մեր երկրի մեծագույն սպառնալիքներ: Հասարակական կարծիքի գրեթե բոլոր հարցումներում Թուր-

քմանում է այն մասին, որ մեզանում հայ հանրության հասարակական կարծիքի վերածնալիքում զանգվածային փորձեր են կատարվում: Սակայն ժամանակակից հայ հասարակությունը բավականին իրատեսորեն է գնահատում Հայաստանի զարգացման հեռանկարները ԱՊՀ, ՀԱՊԿ և ԵԱՏՄ շրջանակներում: Այս ինտեգրացիոն միություններին Հայաստանը միացել է տարիներ առաջ և դրանց անդամակցելու շնորհիվ կարողացել է արդյունավետ զարգացնել տնտեսությունն ու ապահովել բնակչության անվտանգությունը: Հայաստանի իշխանությունը պետք է հաշվի նստի սեփական բնակչության կարծիքի հետ, եթե հավատարիմ է մնում ժողովրդավարության սկզբունքներին:

Ընդգծելով, որ հայ ժողովուրդն ինքը պետք է ընտրի սեփական ճանապարհը՝ ԵՄ ու ՆԱՏՕ, թե՛ ԵԱՏՄ ու Ռուսաստան, մշեմք, որ 2018 թ. «թավշյա» հեղափոխությունից և 44-օրյա պատերազմում կրած պարտությունից հետո հստակ դարձավ, որ Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունն ամրապնդման և լուրջ վերանայման կարիք ունի: Դա կարող է լինել ՌԴ-ի հետ ռազմական համագործակցության մոր պայմանագրի, կամ մեր միության ստեղծման ճանապարհով: Միգուցե Հայաստանում ռուսական ռազմական ներկայության ընդլայնման ճանապարհով: Ամեն դեպքում այս ուղղությամբ հստակ քայլեր պետք է ձեռնարկվեն: Շատ կարևոր է հասկանալ, որ Եվրոպայի և Արևմուտքի հետ լավ հարաբերություններ զարգացնելը պարտադիր չէ իրականացնել Ռուսաստանից՝ որպես ավանդական ռազմավարական գործընկերոջից, հրաժարվելու հաշվին: Բազմաթիվ երկրների հաջողվում է հմուտ դիվանագիտության շնորհիվ դրական հարաբերություններ պահպանել ինչպես Արևմուտքի, այնպես էլ Ռուսաստանի հետ: Հենց դա են իրականացնում, օրինակ, հարևան Թուրքիան և Ադրբեյջանը: Հարց է առաջանում, թե ինչու Հայաստանին չի հաջողվում նույն իրականացնել:

**Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս**

## ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

XX դարը պատմության մեջ կմնա որպես համաշխարհային կայսրությունների փլուզման և միևնույն ժամանակ մոր պետությունների ու դրանց միավորումների ձևավորման դարաշրջան: Այսօր Եվրասիական մայրցամաքում գործում են երկու խոշոր ինտեգրացիոն համակարգեր՝ Եվրամիությունը (ԵՄ) և Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ): Վերջինիս ինտեգրացիոն գործընթացներն ընթանում են ԵՄ-ի ուժեղ ձգողականության դաշտի ազդեցության ներքո: Եվրասիական ինտեգրացիոն մախազիժը փաստորեն զարգանում է եվրաինտեգրման հետ կոշտ մրցակցության պայմաններում:

Հայ-ռուսական հարաբերություններն ունեն խոր քաղաքակրթական արմատներ: Հայ ժողովուրդը միշտ առանձնահատուկ վստահությամբ և բարեկամական զգացումներով է վերաբերվել Ռուսաստանին և ռուսներին: Այսօր աշխարհում ամենամեծ Հայկական սփյուռքը բնակվում է Ռուսաստանում՝ 2,5 միլիոն մարդ, որն իր չափերով համեմատելի է Հայաստանի 2,9 միլիոն բնակչության հետ: Ռուսաստանը մեր ամենամեծ տնտեսական գործընկերն

2021 և 2022 թթ. ուսումնասիրություններում հարցված հայերի մեծամասնությունը Ռուսաստանն անվանել է ամենակարևոր քաղաքական (57%), տնտեսական (61%) և անվտանգության գործընկեր (64%): Մեր Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (ՀՍԱ) կողմից 2022թ. կատարված համապետական ներկայացուցչական հարցման արդյունքում 59,4%-ն արտահայտվել էր Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների պահպանման և խորացման օգտին:

Սակայն վերջերս, հետևելով համաշխարհային միտումներին, Հայաստանում նույնպես հայտնվեցին հակառուսական տրամադրություններ տարածող հրապարակումներ: Հատկապես սոցիալական ցանցերում և որոշ լրատվամիջոցներում վերջին ժամանակներում հակառուսական դիսկուրսն ակնհայտորեն աճել է: Հակառուսական հայտարարություններն ու մեղադրանքները սկսել են ավելի հաճախ նետվել համայնքի խոսույթի մեջ: Ռուսաստանի և Թուրքիայի միջև սերտ գործընկերությունը չի վրիպում հայության մախանձախնդիր ուշադրությունից և օգտա-

քիան (88%) և Ադրբեյջանը (81%) հանդես են եկել որպես թշնամի պետություններ: Նշենք նաև, որ Թուրքիայում և Ադրբեյջանում անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրությունների համաձայն՝ մրանց բնակչության ճնշող մեծամասնությունը (78-83%) նույնպես Հայաստանը համարում է թշնամական երկիր:

Աշխարհաքաղաքական ռազմավարության տեսանկյունից Հարավային Կովկասի երկրները (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան) կարող են լինել կամ Ռուսաստանի, կամ Թուրքիայի ազդեցության դաշտում: Ավանայտ է, որ Հայաստանի կողմնորոշումը դեպի ԵՄ ու ՆԱՏՕ նշանակում է անցում Թուրքիայի հովանավորության տակ: Ռուսական վեկտորի մերժումը միանշանակ հանգեցնելու է Թուրքիայի ուժեղացման մեր տարածաշրջանում: Հայաստանում իշխող քաղաքական վերնախավը փաստացի դրան է տանում, բայց հայ բնակչությունը կողմնորոշված է դեպի Ռուսաստան և համոզված է, որ ժողովրդի անվտանգությունը, ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ այսօր գլխավորապես կախված է Ռուսաստանից:

## ՎՐԻՊՈՒՄ ՀԱՄԱՐԵՆՔ, ԹԵ՛ ԾՐԱԳՐՎԱԾ ՆՊԱՏԱԿ

Աշխարհում եղած ամենայն կարևոր պարտականության համար կա այն մարդը, ով ամենից ավելի անհամապատասխան է գործին:

**Լոուրենս Ջորջ Պիտեր**

Ո՞ր աշխարհի մասին է խոսքը և ի՞նչ միջավայրի ու մարդկանց մեզանից հեռու: Ամերիկացի հեղինակը նկատի է ունեցել անցյալ դարի 60-70-ական թվականների իր երկիրը պետական, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Մենք այնտեղ, փառք Տիրոջը, ի՞նչ լավ է, չենք եղել:

Եվ ի՞նչ... Այսօր շա՛տ հեռու ենք պետական, հասարակական, ազգային, մշակութային ու անձնական անպատասխանատվությունից:

Հարցը Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարանի» նորընտիր տնօրենին է վերաբերում, փոխնախարարի պաշտոնում ընդունված մարդու, ով առնչություն չունի հայագիտության հետ, չունի գրաբարի տարրական իմացություն և ոչ մի պատկերացում տեքստաբանության մասին: Սա անլուրջ մոտեցում է և ծիծաղելի կլինե, եթե այսքան տխուր չլիներ: Մատենադարանն այն գիտական հաստատություն է, որտեղ չի կարող լաբորանտ լինել նա, ով չի կարողացել հորենացում բնագրով, ո՞ւր մնաց տնօրեն, այն է՝ գիտական ղեկավար: Միջնադարյան ձեռագրերի հետազոտությունը մի բնագավառ է, որտեղ մասնագիտացում են տեղական, դանդաղ ու ծանր աշխատանքով: Սա ոչ թատրոն է, ոչ համերգասրահ: Ցուցասրահն այստեղ հավելյալ օղակ է ընդամենը, որտեղ նույնպես հատուկ պատրաստություն է պետք: Ի՞նչ է մտածել հոգաբարձուների խորհուրդը, որտեղ մասնագետները չեն թիվ են կազմում: Որտե՞ղ և ո՞վ է ծրագրել այս «վրի-

պումը» և ի՞նչ նկատառումով: Հարցը ծայրագույն լուրջ է, և պատասխանատվություն ենք կրում բոլորս, գուցե ամենից քիչ՝ ընտրվածը, ում իջեցրել են փոխնախարարի պաշտոնից, թե՛ վարկաբեկել՝ դնելով ոչ իր տեղը:

**Հենրիկ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ**

### Խմբագրության կողմից.

Մատենադարանը ազգային մեծագույն արժեք է, և նրան առնչվող ամեն ինչ հավասարապես հուզում է բոլորին: Նոր տնօրենի ընտրության վերաբերյալ վերջին շրջանում եղել են բազում հրապարակային անդրադարձներ: Սակայն, կանխամտածված փոխելով Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի կազմը և կանոնադրության որոշ կետեր, իշխանությունները հասան նրան, ինչին ձգտում էին. տնօրենի պաշտոնում բաց քվեարկությամբ ընտրվեց ԿԳՄՍՍ փոխնախարար Ա. Խզմալյանը: Որքանով համահունչ կլինի նոր տնօրենի գործունեությունը հայագիտական ուսումնասիրություններ իրականացնող և հարուստ ավանդույթներ ունեցող գիտական այս օջախի աշխատանքներին՝ ցույց կտա ժամանակը: Հուսանք, որ վերջինիս գործունեության կարևորագույն գիտական բաղադրիչը չի մղվի հետին պլան, և Մատենադարանը չի վերածվի թանգարաններին բնորոշ գործառնություններ իրականացնող կազմակերպության:



Գիտության զարգացումը կարևոր նշանակություն ունի տնտեսության բարգավաճման համար: Այս առումով ծավալուն գիտական աշխատանքներ են կատարվում ՀՀ ԳԱՍ տնտեսագիտության ինստիտուտում: Օրերս ինստիտուտում բացվեց ժամանակակից, արդիական սարքավորումներով կահավորված համակարգչային լաբորատորիան: Այն հնարավորություն կընձեռնի գիտաշխատողներին բարձրացնելու իրենց մասնագիտական գիտելիքները տնտեսագիտության տարբեր հարցերի վերաբերյալ: Կահավորված լաբորատորիան լավ հարթակ է հատկապես երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների համար:

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մերի Մանուչարյանը: Նա կարևորեց լաբորատորիայի դերն ու նշանակությունը արդիական խնդիրների լուծման, փորձի փոխանակման, ՀՀ-ում տնտեսագիտական մտքի հետազոտ զարգացման համար:

Լաբորատորիայի ստեղծման գործում զգալի է ոչ միայն տնօրենի ժամանակա-

## ՆՈՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

վոր պաշտոնակատար Մերի Մանուչարյանի, այլ նաև բաժնի վարիչ Վաղիկ Մանուկյանի, կրտսեր գիտաշխատողներ Դավիթ Պետրոսյանի, Հովհաննես Ասատրյանի և այլոց վաստակը: Նրանց ամենօրյա մվիրված աշխատանքով ստեղծվեց բնագավառում եզակի լաբորատորիան:

Ընդհանրապես վերջին շրջանում նկատելի է որոշ աշխուժացում ինստիտուտի գիտական կյանքում: Երիտասարդ շնորհալի գիտաշխատողների գիտական աշխատանքները հրատարակվում են եվրոպական հեղինակավոր, ազդեցության մեծ գործակից ունեցող գիտական պարբերականներում: Նախատեսվում է նաև մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանություն: Առաջիկայում լույս կտեսնի նաև ինստիտուտի հերթական գիտական աշխատությունների ժողովածուն և այլն: Ինստիտուտի աշխատակիցները մասնակցում են տարբեր գիտաժողովների: Վերջերս ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մերի Մանուչարյանը գտնվում էր Հունաստանում, և պայմանավորվածություններ են ձեռք բերվել գիտական հետազոտ կապերի զարգացման համար:

**Ստեփան ՊԱՊԻՅԱՆ**  
**Տեխնիկական գիտությունների թեկնածու**

## ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հայտարարությունը Սևանա լճից հավելյալ ջրառ իրականացնելու վերաբերյալ

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով ստեղծված անկախ և մասնագիտական փորձաքննություն իրականացնող մարմին է: Հանձնաժողովն իրականացնում է Սևանա լճի մասին համալիր և տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող փաստաթղթերի մախնական և ամփոփիչ փորձաքննություններ և տալիս է եզրակացություններ:

Ս.թ. հուլիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի համաձայն՝ Սևանա լճից լրացուցիչ բաց կթողնվի մինչև 70 միլիոն մ<sup>3</sup> ջուր, ընդհանուր ջրառը կկազմի մինչև 240 միլիոն մ<sup>3</sup>:

Օրինագիծը Հանձնաժողով կարծիքի է ուղարկվել ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո, այլ ոչ նախապես: Հանձնաժողովը հուլիսի 7-ին հրավիրել է արտահերթ նիստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի ղեկավարության մասնակցությամբ՝ քննարկելու օրինագիծը: Հանձնաժողովը նշել է, որ Ջրային կոմիտեի ներկայացրած տվյալները ճշգրտման կարիք ունեն: Ջրային կոմիտեն հաշվարկել էր տարվա կտրվածքով 521 միլիոն մ<sup>3</sup> ջրապահանջ, սակայն Հանձնաժողովը հաշվարկել է, որ ջրապահանջը կազմում է 390 միլիոն մ<sup>3</sup>, և Սևանա լճից հավելյալ ջրառի կարիք չկա: Բացի այդ, Ջրային կոմիտեն ոռոգման ենթակա տարածքները մի դեպքում ներկայացրել է 31,3 հազար հա, մյուս դեպքում՝ 30,4 հազար հա: Տարբերությունը մոտ 1000 հա է: Ջրային կոմիտեի հաշվարկով յուրաքանչյուր հեկտարի համար օգտագործվում է 16,6 մ<sup>3</sup> ջուր, ստացվում է ընդհանուր շուրջ 16 միլիոն մ<sup>3</sup> ջուր: Հողատարածքի տվյալները ճշգրիտ չլինելու պարագայում 16 միլիոն մ<sup>3</sup> լրացուցիչ ջուր ապարդյուն է դուրս բերվելու լճից, ինչն անընդունելի է:

Հանձնաժողովը բացասական եզրակացություն է ուղարկել Ջրային կոմիտե Սևանա լճից հավելյալ ջրառի վերաբերյալ, որում մասնավորապես նշված է. «Հաշվի առնելով վերջին տարիներին Սևանա լճի մակարդակի տարեկան կտրվածքով փոփոխությունների բացասական արժեքները և ջրի ինտենսիվ «ծաղկման» գործընթացներով պայմանավորված լճի վատթարացող էկոլոգիական վիճակը՝ Հանձնաժողովն առաջարկում է բացառել լճից օրենքով և ՀՀ կառավարության՝ 11.05.2023թ. N704-Ա որոշմամբ



2023 թ. համար սահմանված ջրառի՝ 170 մլն մ<sup>3</sup> չափաբանակի գերազանցումը: Առաջնորդվելով ՀՀ ՀՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կանխատեսումներով՝ ակնհայտ է, որ մոլորակի 170 մլն մ<sup>3</sup> ջրառի դեպքում Սևանա լճի մակարդակի տարեկան փոփոխությունը կլինի բացասական: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ այս տարվա հուլիս ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները, ըստ կանխատեսումների, առավել նպաստավոր են 2022 թվականի համեմատ:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Հանձնաժողովի նախագահը: Եզրակացության քննարկումը կատարվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Չնայած Հանձնաժողովի բացասական եզրակացությանը՝ ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Սևանա լճից հավելյալ ջրառի օրինագիծը՝ առանց հրավիրելու Հանձնաժողովի նախագահին Ազգային ժողով, չլսելով մասնագիտական փաստարկները, այդպիսով խախտելով «Սևանա լճի մասին» օրենքով սահմանված ընթացակարգը: Մեզ համար խիստ մտահոգիչ է այս գործելաճի:

Սևանի մակարդակի տատանումները հանգեցնում են լճի էկոլոգիական վիճակի վատթարացման: Լճի մակարդակի նվազման դեպքում տեղի է ունենում հատակային և մակերևութային շերտերի ջրերի միախառնում: Օրգանական նյութը, որ տարիներ շարունակ կուտակվել է հատակային նստվածքներում, պարարտ հող է ստեղծում, որպեսզի սննդային շղթայի առաջնային օղակը՝ ֆիտոպլանկտոնը, բուռն զարգացում ապրի և «ծաղկումների հանգեցնի»: Այս տարի Սևանում արդեն սկսվել է «ծաղկումը»: Լճում ընթանում են էկոթաֆիկացման գործընթացներ: Դա իր ազդե-

ցությունը կունենա ինչպես լճի կենսառեսուրսների, այնպես էլ ափամերձ բնակավայրերի սոցիալական վիճակի վրա:

Երկրում սակավաջրություն հայտարարելու դեպքում պետք է հաշվի առնել, որ Սևանա լճի համար ևս սակավաջրություն է: Սևանն իր էկոլոգիական վիճակով այլևս չի կարող ջրառաջարկ ապահովել: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի գաղափարախոսության համաձայն՝ ջրառաջարկն է ձևավորում ջրապահանջ, սակայն մեզանում հակառակ տրամաբանությունն է գործում:

Սևանա լճի էկոհամակարգի պահպանության համար անհրաժեշտ է.

- բացառել հավելյալ ջրառը Սևանա լճից,
- Հանրապետությունում սակավաջրության դեպքում Սևանա լճից ջրառը՝ ներառյալ Հրազդան գետով ջրի ելքը, սահմանել 90 միլիոն մ<sup>3</sup>, որպեսզի լիճն ունենա դրական հաշվեկշիռ,
- Սևանա լճից ջրբացողումը և՛ գիշերվա, և՛ ցերեկվա ընթացքում կայուն հոսքով (այդ թվում՝ Աղբյուրակի ջրամբարից) իրականացնել՝ նվազեցնելով ջրակորուստները Սևան-Հրազդան հիդրոհամակարգում,
- գնահատել ջրակորուստները և միջոցառումներ ձեռնարկել ապօրինի ջրօգտագործումը բացառելու, ջրակորուստները նվազեցնելու ուղղությամբ,
- պահպանել գյուղատնտեսական մշակաբույսերի ջրապահանջի նորմաները,
- կրճատել ջրի գերնորմատիվային կորուստները, մշակել խրախուսման մեխանիզմներ, ջրախնայողական տեխնոլոգիա հողատեսքին համարժեք մշակաբույսեր աճեցնող հողագործների համար,
- ոռոգումը կազմակերպել գիշերային ժամերին,
- վերանորոգել ջրամբարները, մաքրել տիղմից, ջրաբերուկներից, կառուցել մոլ ջրամբարներ՝ թեթևացնելու Սևանա լճի բեռը,
- ներդնել ջրառի բաշխման հաշվառման համակարգ,
- Սևանա լճի ավազանում կառուցել կենսաբանական մաքրման կայաններ, որոնք կլուծեն ափամերձ բնակավայրերի կոյուղաջրերի խնդիրը,
- ՀՀ վարչապետին կից ստեղծել Սևանա լճի հիմնախնդիրների կառավարման հանձնաժողով, որը կզբաղվի Սևանա լճի խնդիրների լուծմամբ:

**ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով**

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Զորաց Քարեր հուշարձանի արեղապնությունը

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող, բժշկական գիտությունների թեկնածու Հայկ Մալխասյանը Զորաց Քարեր հուշարձանի տեղազնությունը ուրվագծել է նրա բազմաշերտ լինելով:

«Շերտերը վերաբերում են Քրիստոսից առաջ 9000, 5800 և 2341 թվականներին և առանձնահատուկ նշելի է, որ հուշարձանը շահագործել են միևնույն մշակույթի կրողները: Ընդհանուր առմամբ, հուշարձանում ակնառու է 11000 տարեկան հայկական աստղադիտական-օրացուցային-կրոնածիսական մշակույթը՝ որպես մեկ ամբողջություն: Կարևոր բացահայտումներից է նաև հուշարձանի կառուցվածքային և բովանդակային կապը 4-րդ հազարամյակի Քեթիի քրեդանի



զարդապատկեր օրացույցի միջև»,- ասաց Հայկ Մալխասյանը:

Ստացված արդյունքները կարևոր, փաստացի աստղադիտական, դիտողական տվյալների հիմնարար ուղեցույց-հենք են հայկական տոմարական-օրացուցային, դիցաբանական, հնագիտական, ազգագրական, ինչպես նաև պատմական անհիշելի անցքերի ուսումնասիրությունների համար:

«Արդյունքներն առավելապես նշանակալի արձագանք են ստանում հայ գիտական հանրության, մասնավորապես հայագիտության բնագավառով հետաքրքրվող գիտնականների շրջանում: Այս ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ հոդվածն արժանացել է մրցանակի հայագիտության ոլորտում տպագրված հոդվածների մրցույթում»,- ասաց Հայկ Մալխասյանը:

Հետազոտության հիմնական արդյունքները տպագրվել են «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ» (ComBAO) գրախոսվող գիտական պարբերականում (անգլերեն), Վենետիկի «Բազմակետ» գիտական պարբերականում, ինչպես նաև միջազգային որոշ գիտաժողովների նյութերում:

Ուսումնասիրությունները կատարվել են Բյուրականի աստղադիտարանի և ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Հայաստան ներմուծված ծառաբույսերը գերազանցում են աբորիգեն տեսակներին

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտնականները բացահայտել են, որ Հայաստան ներմուծված ծառաբույսերն ավելի քան չորս անգամ գերազանցում են աբորիգեն ծառաբույսերին:



«Հայաստանի աբորիգեն ծառաբույսերը ներկայացնում են 54 ընտանիքի 117 ցեղի 346 տեսակ, իսկ ներմուծվածները՝ 66 ընտանիքի 193 ցեղի շուրջ 1600 տեսակ և տարատեսակ»,- ասաց Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտնական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժիրայր Վարդանյանը:

Ներմուծված և կլիմայավարժեցված տեսակների վարքագծի վերլուծության հիման վրա գիտնականները կանխատեսել են, որ կանոնավոր և նպատակաուղղված ներմուծման արդյունքում

25-30 տարի անց Հայաստանի բուսաբանական այգիներում օտարածին դենդրոֆլորան ներկայացված կլինի շուրջ 2000 տեսակով և տարատեսակներով, որոնց կազմում մեծ թիվ կկազմեն պարտիզային ձևերը:

Գեղեցիկ ծաղկող թփատեսակների ներմուծմամբ և ցեղային կոմպլեքսի սկզբունքով հավաքածու ստեղծելով՝ հնարավոր կլինի հիմնել երկարատև ծաղկող այգի, ինչը շատ կարևոր է հատկապես կիսաանապատային կլիմայական պայմաններում գտնվող Երևանի համար: Ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքների շնորհիվ Երևանի բուսաբանական այգում պարտիզային ձևերի թիվն ավելացել է 14 մոր պարտիզային ձևերով:


«Ներկայում Երևանի բուսաբանական այգում այդ հավաքածուն ընդգրկում է 63 անուն պարտիզային ձև: Մեր կասերները ներկայացված են 19 անուն պարտիզային ձևով, իսկ ծածկասերները՝ 44: Կատարվել են Արալիազգիների (Araliaceae) ընտանիքի 4 ցեղի, 4 տեսակի ածի, զարգացման և հարմարվողականության ուսումնասիրություններ»,- նշեց Ժիրայր Վարդանյանը:

Ուսումնասիրություններն իրականացվել են ինստիտուտի բազային ֆինանսավորման շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## ՌԻԶԱՐԴ ՇՈՎԱՆՆԻՍՅԱՆ



### Բազմավաստակ ամերիկահայ պատմաբանը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը խոր վշտով տեղեկացավ վաստակաշատ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Կալիֆոռնիայի պետական համալսարանի արդի հայոց պատմության ամբիոնի հիմնադիր ու առաջին վարիչ, «Հայաստանի Հանրապետություն» կոթողային քառահատոր աշխատության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ գրքերի հեղինակ Ռիչարդ Շովաննիսյանի մահվան մասին:

Ռիչարդ Շովաննիսյանը կյանքից հեռացել է 90 տարեկան հասակում սույն թվականի հուլիսի 10-ին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում:

Ռիչարդ Շովաննիսյանի հիմնարար աշխատությունները վերաբերում են Հայաստանի, Անդրկովկասի և Միջին Արևելքի պատմության հարցերին, Հայաստանի Առաջին հանրապետության, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմությանը և պատմագրությանը: Նրա՝ Հայաստանի Առաջին հանրապետության պատմությանը նվիրված քառահատոր արժեքավոր աշխատությունը, Հայոց ցեղասպանության վերաբերյալ անգլերեն և հայերեն հրապարակումներն էական ներդրում են հայոց պատմության բարդագույն խնդիրների հետազոտության և գիտական մեկնաբանման գործում: Պրոֆեսոր Շովաննիսյանը բազմիցս մասնակցել է մշակված հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովների, ներկայացրել իր հիմնավոր և սկզբունքային դիտարկումները հայկական պետականության և Հայոց ցեղասպանության շարժառիթների ու հետապնդվող նպատակների վերաբերյալ:

Ռիչարդ Շովաննիսյանը եղել է Կալիֆոռնիայի (Լոս Անջելես) պետական համալսարանի պրոֆեսոր (1969թ.-ից), հայոց և կովկասյան պատմության բաժնի վարիչ, մագիստրոսի և փիլիսոփայության դոկտորի կոչումներ շնորհիվ ծրագրերի ղեկավար (1962 թ.-ից), Հայ կրթական հիմնարկության հայ ժողովրդի արդի պատմության ամբիոնի վարիչ (1987 թ.-ից): Նա Ամերիկայի հայկական համագումարի և հայագիտական ընկերակցության հիմնադիր անդամներից էր, վերջինիս առաջին նախագահը: Անդամակցել է միջազգային և ամերիկյան գիտական ու հասարակական մի շարք կազմակերպություններին: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ էր 1990 թ.-ից:

Ռիչարդ Շովաննիսյանն արժանացել է ԵՊՀ-ի և Արցախի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման: Պարգևատրվել է ՀՀ Սովսետ Խորենացու մեդալով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատվո թարձր շքանշանով, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկո կաթողիկոսության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և «Կիլիկո ասպետ» շքանշաններով: Ռիչարդ Շովաննիսյանի անունով է կոչվում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը սգում են ականավոր գիտնականի մահը և ցավակցում պրոֆեսոր Շովաննիսյանի ընտանիքին, հարազատներին և մտերիներին:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն  
ՀՀ ԳԱԱ հայագիտության և  
հասարակական գիտությունների բաժանմունք**

## ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (Գործունեության հիմնական արդյունքների համառոտ ակնարկ)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմավորումն անցել է բարդ և երկարատև ուղի (1925–1940 թթ.): 1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա ստեղծված Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում Պատմության ինստիտուտը դարձավ առանձին հաստատություն: Նորաստեղծ ինստիտուտի առաջին տնօրենը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր: Հետագայում տնօրեններ են եղել ԳԱ ակադեմիկոսներ Աբգար Շովաննիսյանը, Սուրեն Երեմյանը, պատմ. գիտ. դոկտոր Արմո Հարությունյանը, ԳԱԱ ակադեմիկոսներ Գալուստ Գալոյանը, Հրանտ Ավետիսյանը: 2002 թ. մինչ օրս ինստիտուտը ղեկավարում է ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Համառոտ ներկայացնենք Պատմության ինստիտուտի գործունեության հիմնական գիտական ուղղությունները.

- Հայ ժողովրդի կազմավորման և Հայոց հնագույն պետականությունների պատմություն,
- Հայաստանը միջին դարերում,
- Հայ եկեղեցու պատմություն,
- Հայ ազգային-ազատագրական շարժումների պատմություն,
- Հայ մամուլի, հասարակական-քաղաքական մտքի և հոսանքների ու կուսակցությունների պատմություն,
- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն,
- Հայաստանում ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն,
- Հայաստանի I, II և III հանրապետությունների, ԼՂԻՄ-ի և ԼՂՀ-ի (Արցախի Հանրապետության) պատմություն,
- Հայ գաղթաշխարհի և Սփյուռքի պատմություն,
- Հայոց պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն,
- Համաշխարհային պատմություն:

Պատմության ինստիտուտը հրատարակել է իր գիտական հիմնական ուղղություններին առնչվող հարյուրավոր գիտական արժեքավոր ժողովածուներ ու մենագրություններ, ինչպես նաև հազարավոր գիտական հոդվածներ: Ինստիտուտի գիտական ուշագրավ հրատարակություններից են՝ «Կանոնագիրը հայոց», 15-18-րդ դդ. ձեռագրաց հիշատակարանները, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարը (14 հատոր), Հ. Մանանդյանի երկերը (6 հատոր), «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (4 հատոր), «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919)», «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)», «Լեռնային Ղարաբաղը 1917-1923 թթ.», «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.)» (3 հատոր), «Հայ պարբերական մամուլի պատմություն (1794-1922 թթ.)» (2 հատոր), հայառուսական և այլ ժողովուրդների հետ պատմամշակութային կապերի պատմությանը նվիրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ և այլն:

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակաշրջանում ընդհանրացվել են «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակում (1967-1984 թթ.), որն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Անկախության շրջանում ինստիտուտի գլխավոր ձեռքբերումը, անշուշտ, «Հայոց պատմության» նոր քառահատորյակի (ութ գրքով) հրատարակությունն է: 2010 թ. մինչ օրս լույս են տեսել քառահատորյակի վեց գրքեր, յոթերորդը հանձնվել է տպագրության: Հընթացս շարունակվում են վերջին գրքի հրատարակության նախապատրաստման աշխատանքները:

Ինստիտուտի համար քառահատորյակի պատրաստումը լրջագույն և պատասխանատու խնդիր էր: Խորհրդահայ պատմագրությունը հասկանալի պատճառներով գերել էր ժամանակի գաղափարական և մեթոդաբանական բնույթի ազդեցություններից: Բնականաբար, մի շարք խնդրահարույց հիմնահարցերի նորովի լուսաբանման, պատմական դեպքերի և դեմքերի գնահատման հարցում հավելյալ կամ պակաս շեշտադրումների օբյեկտիվ պահանջ էր առաջացել: Քառահատորյակի հեղինակային կազմին և խմբագրական խորհրդին հնարավորինս հաջողվել է լուծել հարանման և այլ բնույթի բազում խնդիրներ: Այս մեծածավալ աշխատանքներին (շուրջ 500 պայմանական տպագրական մամուլ ծավալով), բացի ինստիտուտի աշխատակիցներից, մասնակցել են բազմաթիվ մասնագետներ:

Ներ ԳԱԱ համակարգի հայագիտական ինստիտուտներին, Մատենադարանից և տարբեր բուհերին: Քառահատորյակի պատրաստումը տարիների լարված և համակարգված աշխատանքի արգասիք է: Այն հանգրվանային մշակութային ծանրակշիռ ներդրում է հայ պատմագիտության բնագավառում:

Միայն վերջին տասը տարում Պատմության ինստիտուտը հրատարակել է 275 մենագրություն և ժողովածու (16-ը՝ արտասահմանում), 32 ուսումնական ձեռնարկ և դասագիրք (1-ը՝ արտասահմանում), 1563 հոդված գրախոսվող ամսագրերում (217-ը՝ արտասահմանում), 363 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (67-ը՝ արտասահմանում), 85 թեզիսներ (44-ը՝ արտասահմանում): Ինստիտուտը հրատարակում է նաև «Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականը:

Մշակվել են համագործակցության ծրագրեր Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Վրաստանի, Լեհաստանի, Եգիպտոսի, Հունաստանի գիտական մի



շարք կազմակերպությունների հետ: Ինստիտուտը ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի անդամ է: Սերտ կապեր են հաստատվել նաև Սփյուռքի գիտակրթական կենտրոնների և կառույցների հետ:

2013 թ.-ից առ այսօր ինստիտուտը կազմակերպել է անցկացրել է 3 միջազգային և 53 հանրապետական գիտաժողովներ, որոնց աշխատանքներին ներգրավվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ մեր երկրի գիտական և բուհական ոլորտի բազմաթիվ կազմակերպություններ: Այդ ժամանակահատվածում ինստիտուտում պաշտպանել են 5 դոկտորական և 13 թեկնածուական ատենախոսություններ:

Ինստիտուտի առաջիկա ծրագրերից են «Հայոց պատմության» ակադեմիական քառահատորյակի առավել սեղմ տարբերակով ռուսերեն և անգլերեն թարգմանություններն ու հրատարակությունները:

Ութ տասնամյակների ընթացքում Ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատակիցների ջանքերով ստեղծվել է հայոց պատմության ամենատարբեր հարցերին նվիրված գիտական պատկառելի ժառանգություն: Պատմության ինստիտուտը եղել և այսօր էլ շարունակում է մնալ հայ պատմագիտական մտքի խոշորագույն կենտրոնը:

Մեր պատմաբանների հասցեին վերջերս ամենաբարձր ամբիոնից հնչեցին քննադատական խոսքեր նորանկախ հանրապետությունում պատմագիտական դպրոցի իբր թե չկայացման և «կաղապարվածությունից» դուրս չգալու վերաբերյալ: Ձավեշտ է, բայց փաստ, որ քննադատությունը հնչում է ապագային արժեքներով արդեն իսկ կաղապարված և այդպես էլ չկայացած անձանց կողմից: Գիտությունից և մասնավորապես պատմագիտությունից հեռու կանգնած նման մտահանգման հեղինակները, որոնք անգամ փոքրիշատե ժանր չեն Պատմության ինստիտուտի հետազոտությունների արդյունքներին, իրենց իրավունք են վերապահում պատմության դասեր տալու պատմաբաններին: Ինստիտուտի վերջին քսան տարիների գործունեությունը և մանավանդ «Հայոց պատմության» քառահատորյակի արդեն լույս տեսած գրքերը լավագույն վկայությունն են, որ քննադատողները կամ անտեղյակ են հայ պատմագիտության ընդհանուր գործընթացից և ձեռք բերված արդյունքներից, կամ էլ պարզապես ի գործու չեն իրապես դրանք գնահատելու:

Ամերիկա կարող ենք փաստել, որ մեզանում վաղուց կայացել է պատմագիտական դպրոցը, իսկ նրա հենասյունը՝ ԳԱԱ պատմության ինստիտուտն իր հարուստ փորձով, ներուժով և նորամուր արժեքավոր ուսումնասիրություններով մշտապես ապահովել է իր հաստատուն և որոշիչ դերակատարումը հայ պատմագիտական մտքի զարգացման գործում:

**«Գիտություն» թերթի խմբագրություն**

# Կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզայի ծննդյան 170-ամյակին նվիրված գիտաժողով

Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ, երաժշտական քննադատ Քրիստափոր Կարա-Մուրզայի ծննդյան 170-ամյակին նվիրված գիտաժողով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը: «Հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ իրակա-

տության տարածումը: Հայ իրականության մեջ ազգային օպերա ստեղծելու առաջին փորձը՝ «Շուշան» օպերան, և պատկանում է Կարա-Մուրզային», - ասաց Աննա Ասատրյանը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը նշեց. «Կարա-Մուրզան հայ երաժշտության պատմության մեջ անուրանալի

Յուրի Սուվարյանը, ողջունելով ներկաներին, ասաց. «Նման միջոցառումներն ունեն երկու կարևոր նպատակ՝ արժևորել մեր մշակույթի ակամավոր գործիչների թողած ստեղծագործական ժառանգությունը և մեր այս դժվարին ժամանակներում մեկ անգամ ևս հիշեցնել մեր սերունդներին, թե ինչ հարուստ ժառանգություն ենք ունեցել, ինչը պետք է գնահատել և հիշել: 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ նա սկսեց իր գործունեությունը, դեռ ասպարեզ չէին եկել մեր մշակույթի բազմաթիվ նշանավոր գործիչներ: Եվ այդ ժամանակ նա ստանձնեց առաքելություն, որը չափազանց կարևոր էր նաև հետագա զարգացումների համար: Նրա ստեղծած մեծ թվով խմբերգերը՝ շուրջ 300, երգ-չախմբերը՝ 90, և կատարումները երգչախմբի հետ միասին կարողացան Հարավային Կովկասի բազմաթիվ հայաշատ քաղաքներում, այդ թվում՝ Շուշիում, հսկայական աշխատանք կատարել հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացումը խթանելու ուղղությամբ, և այսօր մենք պետք է արժանին մատուցենք նրա կատարած այդ վիթխարի աշխատանքին»:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը նշեց. «Տարիների ընթացքում այն ավանդույթը, որը մտցրել էր Կարա-Մուրզան՝ ստեղծագործող, հասարակական գործիչ, կազմակերպող միաձուլումը, տվել է հիմնարկ արդյունքներ: Հետագայում Կոմիտասը և բազմաթիվ այլ կոմպոզիտորներ կազմակերպում էին, ձգտում վեր հանել հայ արվեստը ոչ միայն հայության շրջանում, այլ նաև այնտեղ, որտեղ հայեր չկային: Արդյունքում այսօր մենք ունենք մի ամուր համակարգ, որի վրա կարող են հենվել



ժամանակակից հայ կոմպոզիտորները»:

Գիտաժողովի ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Հայաստանի կոմպոզիտորների միության, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու ներկայացուցիչները հանդես եկան զեկուցումներով՝ նվիրված հայ խմբերգային արվեստին Քրիստափոր Կարա-Մուրզայից մինչև Հովհաննես Չեքիջյան, Կարա-Մուրզայի գործունեությանը և ստեղծագործական ժառանգությանը:

Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



նացնում ենք նման գիտական կոնֆերանս՝ նվիրված Կարա-Մուրզայի գործունեության պատմական նշանակությանը: Կարա-Մուրզայի հետ է կապված հայ երաժշտության մեջ բազմաձայնության արմատավորումը: Նա հայ երաժշտության առաջին գործիչներից էր, ով զբաղվեց հայ ժողովրդական երգերի հավաքման, գրառման, բազմաձայնման և տարածման գործով: Նրա անվան հետ է կապված նաև հայ խմբերգային երաժշ-

վաստակ ունի: Մեր սրբազան պարտականությունն է հասնել նրան, որպեսզի հայը նույնականանա ոսկեդարյան ժառանգության հետ մինչև Կարա-Մուրզա, որպեսզի մենք տեսնենք հայրենասեր, հայրենիքն իրենց մեջ կրող հայերի», - ասաց Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս

## ԳԻՏՆԱԿԱՆ-ԱՐՎԵՍՏԱԲԱՆԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

նագետների և ռուսական պոեզիայի սիրահարների շրջանում: Արդյունքն ամենախաղեայ էր, քանի որ գործ ունենք հայոց և ռուսաց լեզուներին կատարելապես տիրապետող, մեր օրերում սակավադեպ հանդիպող մտավորականի հետ: Գրքույկի ծննդյանն անդրադարձավ նաև ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթը իր՝ 2014 թ. փետրվարյան համարում:

Եվ ահա, ճիշտ 10 տարի անց վաստակաշատ արվեստաբան ընթերցողի դատին է հանձնել նոր ժողովածուն՝ այս անգամ հնարավորություն ընձեռելով ծանոթանալու նաև իր պոեզիային: Բնական է հայտնի, որ դեռևս պատմական տարիներին Ա. Աղասյանը ստեղծագործել է, բանաստեղծություններ գրել հայոց և ռուսաց լեզուներով, որոնք, ցավոք, մինչ օրս անտիպ էին (միակ բացառությունը վաղամեռիկ մոր՝ Մարգարիտա Ասոյանի հիշատակին նվիրված «Ռեքվիեմ» է (1991), որը լույս է տեսել 2016-ին):

Ժողովածուի առաջին բաժնում առաջին անգամ ներկայացված է արվեստաբանի բանաստեղծական քնարը՝ 44 բանաստեղծությունները (հիմնականում՝ ռուսերենով), որոնց առաջին մեծագույնը գրվել են դեռևս 1973 թվականին: Բանաստեղծական շարքը եզրափակում է 2012-ով թվագրված «Դու կանգնած ես իմ դիմաց» ոտանավորը:

Ժողովածուի երկրորդ՝ «Ռուսական քնար (թարգմանություններ)» բաժնում ընդգրկված են XIX-XXI դարերի ռուս բանաստեղծների ավելի քան 200 ստեղծագործություններ, որոնցից շատերը հայերեն թարգմանվել են առաջին անգամ: Ռուս դասական բանաստեղծների, այդ թվում՝ Ժուկովսկու, Պուշկինի, Տյուտչևի, Լերմոնտովի, Ֆետի, Նեկրասովի, Բալմոնտի, Գորկու, Բրյուսովի, Բլոկի, Գումիլ-

յովի, Պաստերնակի, Մանդելշտամի, Մայակովսկու, Եսենինի, Նաբոկովի, Սիմոնովի, Եվտուշենկոյի, Ռոժդեստվենսկու, Վոլգենեսևսկու, Բրոդսկու, բանաստեղծուհիներ Ջինաիդա Գիպիուսի, Աննա Ախմատովայի, Մարինա Ցվետաևայի, Բելա Ախմադովիչայի և այլոց կողքին թարգմանչի ուշադրության են արժանացել նաև իր կրտսեր սերնդակիցների՝ ժամանակակից պոետներ Նիկոլայ Ջինովի, Իվան Գոլուբնիչիի և Բորիս Ռիժիի չափածո երկերը:

Ժողովածուի հայկական ակորդը հնչում է Վալերի Բրյուսովի «Հայաստանին», Օսիպ Մանդելշտամի «Կառապան» և Արսենի Տարկովսկու «Կոմիտաս» բանաստեղծությունների թարգմանություններով:

Գաղտնիք չէ, որ բանաստեղծական թարգմանությունը թարգմանության ամենաբարդ տեսակներից է, քանի որ թարգմանչից պահանջում է մի կողմից՝ տվյալ լեզուների կատարյալ տիրապետում, երկրորդի պատմության, մշակույթի և ազգային առանձնահատկությունների իմացություն (մշտնապես, որ Ա. Աղասյանն ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը և 5 տարի ապրելով Մոսկվայում՝ խորապես ուսումնասիրել այդ ամենը), մյուս կողմից՝ բանաստեղծություն հորինելու որոշակի կարողություն, տվյալ լեզվի բանաստեղծական ձևի, լեզվի կառուցվածքի, հանգի, այսպես կոչված բանաստեղծության երաժշտության և ավանդաբար ձևավորված չափերի առանձնահատկությունների իմացություն և զգացողություն:

Միավորված չեն լինի, եթե ասեն, որ իր թարգմանություններում Ա. Աղասյանը հանդես է գալիս ոչ միայն որպես թարգմանիչ, այլև ինչ-որ տեղ դառնում է հա-

յերեն տարբերակի «համահեղինակ»: Նրա թարգմանություններն արվեստի իսկական գործեր են՝ երբեմն չգիշելով բնագիրն, երբեմն՝ նույնիսկ գերազանցելով դրանք:

Թարգմանությունների գրականագիտական գնահատականները թողնելով գրականագետներին՝ որպես երաժշտագետ նշեն, որ Ա. Աղասյանի թարգմանությունները զարմանալիորեն երաժշտական են: Բերեն ընդամենը 1 օրինակ: Հայտնի է, որ Տյուտչևի «Я встретил вас-и все было» բանաստեղծության հիման վրա կա հանրահայտ ռուսական ռոմանս: Եվ ահա Ա. Աղասյանի թարգմանության տեքստը ներդաշնակորեն «նստում է» ռոմանսի մեղեդու վրա, և ռուսական ռոմանսը կարող է հրաշալիորեն հնչել հայերեն: Վստահ են, որ այս թարգմանությունները կարժանանա հայ ժամանակակից կոմպոզիտորների ուշադրությանը և հիմք կդառնան նոր երգերի ու ռոմանսների ստեղծման համար. ռուսական պոեզիայի այս գոհարների երաժշտական կյանքը կշարունակվի նաև «հայերեն»:

Ժողովածուն արժեքավոր ներդրում է հայ թարգմանչական արվեստում և վկայությունն է այն իրողության, որ հայոց մեջ շարունակվում է կարևորվել թարգմանական արվեստը (պատահական չէ, որ մեր տոնացույցում ունենք Թարգմանչաց տոն), և ռուսական պոեզիան շարունակում է մնալ թարգմանչական արվեստով զբաղվող հայ գրողների, բանաստեղծների, գրականագետների, առհասարակ մտավորականների ուշադրության կենտրոնում:

**Աննա ԱՍՍՏՐՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր,  
պրոֆեսոր**



Օրերս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի գրական ժառանգությունը ներկայացնող երկրորդ գիրքը՝ «Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ)» ստվարածավալ հատորը (550 էջ):

Կերպարվեստագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ավանդին զուգահեռ՝ վերջին տարիներին նկատելի է նաև արվեստաբան-գիտնականի ներդրումը հայ պոեզիայում, մասնավորապես թարգմանչական արվեստում:

2013 թ. հրատարակվեց Ա. Աղասյանի «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն, որն ընդգրկում էր XIX-XX դարերի 15 ռուս բանաստեղծների 60 ոտանավորների դասական օրինակներն ու դրանց հայերեն թարգմանությունները, որոնցից շատերը հայերեն էին թարգմանվել առաջին անգամ: Ժողովածուն մեծ հետաքրքրություն առաջացրեց գրակա-

# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԻՑ

## Ակադեմիկոսը և քաղաքացին

Դերենիկ Դեմիրճյանը 1953-ին ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Ուշ աշնանն էր, գրողների տան բազմոցին նստած՝ շնորհավորանքներ էր ընդունում հաճույքով:

- Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ,- ժպտում էր Դեմիրճյանն իրեն շնորհավորողներին,- պատիվ է, մեծ պատիվ է ինձ համար լինել գիտության բարձրագույն կաճառի անդամ:

Շնորհավորեց նաև Ստեփան Զորյանը, անկեղծ ու սրտագին:

Անցավ մի քանի ամիս: 1954-ի գարնանամուտն էր արդեն:

Զորյանն ընտրվել էր միութենական Գերագույն խորհրդի ղեկավար: Գրողների տան նույն բազմոցին հիմա նա էր նստած և ժպտերես ընդունում էր գրչակից ընկերների շնորհավորանքները:

Դեմիրճյանը բռնեց Զորյանի ձեռքը:

- Ուրախ եմ, Ստեփան, շատ ուրախ, որ երկրի իշխանության մեջ գրողներն իրենց մարդն ունեն:

Եվ հետո հանկարծ.

- Ստեփան, մի բան ասեմ, հուսով եմ, որ ճիշտ կհասկանաս ինձ: Դու այն կարծիքին չե՞ս, որ մեր ուժերն այնքան էլ ճիշտ չեն օգտագործվում: Եթե ընտրողները երկար ու բարակ մտածեին, ծանր ու թեթև անեին, քեզ ակադեմիկոս կընտրեին, ինձ՝ ղեկավար:

Զորյանը լուռ էր, ծայր չէր հանում: Դեմիրճյանն առաջ տարավ խոսքը:

- Ակադեմիան, սիրելիս, հանդարտ մարդու տեղ է. իսկ ու իսկը քեզ համար: Կնստեիր ակադեմիական ժողովներում, հանգիստ և անխռով մտքեր կփոխանակեիր պատմության, լեզվի, գրականության ու արվեստի բազմափնտրելի խնդիրների շուրջ: Իսկ ղեկավարի գործն ուրիշ է, մեկ այստեղ պիտի լինի, մեկ այնտեղ, մարդկանց պիտի ընդունի, ինքը պիտի այցելի խնդրատուներին, հարցեր բարձրացնի, վիճի, աղմկի, եթե հարկավոր լինի, նաև կռվի, մինչև որ նպատակին հասնի: Դա էլ իմ տեղն է: Գիշտ չե՞մ ասում որ:

Զորյանը ժպտում էր, և դժվար էր հասկանալ՝ համաձայն էր, թե՞ ոչ:



## Ժպտալով կռվեցե՞ք

Ֆինն գրողները հայ գրողների հյուրն էին: Գրողների տանը մի սեղանի շուրջը համախմբվել էին հյուրերն ու հյուրընկալները, և փոխադարձ ողջույններից հետո ծայր էր առել սովորական գրույց գրական հարցերի շուրջ:

Հանդիպումից կես ժամ էր անցել երկի: Դեմ Դիմաց նստած Նաիրի Զարյանը և Քրիստափոր Թափալցյանը վեճի էին բռնվել: Վեճն էլ, որ կապ չունեի սեղանի շուրջը ծավալված խոսակցության հետ, աղմկոտ էր: Ըստ երևույթին, մոռացած հյուրերի ներկայությունը, նրանք ազատություն էին տվել իրենց կրքերին, մանավանդ միմյանց նկատմամբ առանձին համակրանք չունեին:

Դերենիկ Դեմիրճյանը զգուշացրեց.

- Այդքան բարձր մի՛ խոսեք, անհարմար է:

Մի պահ հանդարտվեցին, բայց հետո նորից ծայրերը բարձրացրին:

Տեսնելով, որ գրչակից ընկերներին չի կարողանում կարգի հրավիրել, Դեմիրճյանը, իրեն հատուկ բարակ ժպիտը շրթունքներին, նորից դարձավ Նաիրիին ու Քրիստափորին և կամացուկ խորհուրդ տվեց.

- Տնաշեններ, եթե չեք կարողանում չկռվել, կռվեցե՞ք, միայն ժպտալով կռվեցե՞ք...

○

Պատերազմի տարիներն են: Գիտական աշխատողներն ուղարկվում են զորամասեր, որպես զեկուցողներ: Ակադեմիայի նախագահ Հովսեփ Օրբելին ինքն

էր գլխավորում գործը: Հավաքել է պատմության և գրականության ինստիտուտների աշխատակիցներին և հարցրել, թե ով ինչ լեզվով է զեկուցելու:

Մեկը՝ հայերեն, մյուսը՝ ռուսերեն: Հերթը հասավ մի պատմաբանի, որը, կակազ լինելով, ամեն բառից առաջ իր կամքից անկախ ավելացնում է **էտ** վանկը: Օրբելին այդ չգիտեր:

- Դուք ի՞նչ լեզվով եք զեկուցելու:

- Էտ ռուսերեն:

Օրբելու հոնքերը զարմանքից վեր բռան:

— Ինչպե՞ս:

— Այո, էտ ռուսերեն:

- Չեմ հասկանում, որքան ինձ հայտնի է, էտ ռուսերենը մինչև հիմա վերծանված չէ:

Բոլորս ծիծաղեցինք: Պայթեց և Օրբելու քահ-քահ ծիծաղը, երբ իմացավ, թե ինչ թյուրիմացություն է դա:

○

Գիտական նստաշրջան էր հնությունների պահպանման կոմիտեում: Նախագահը Օրբելին էր: Ձեկուցողը՝ Տոկարսկին, արծարծում էր հայ ճարտարապետության մեջ երկարության միավոր սահմանելու հարցը՝ չիլշելով, որ Օրբելին և ինքը այդ հարցի շուրջ որոշ եզրակացության էին եկել դեռ հեղափոխությունից առաջ՝ Անիում կատարած պեղումների ժամանակ: Անցել է մի քանի տասնամյակ, և նա արծարծում է խնդիրը նույնությամբ կամ նախկինից ինչ-որ չափով տարբեր: Օրբելին հանկարծ ընդհատեց զեկուցողին.

- Դուք ճանաչո՞ւմ էիք հանգուցյալ գիտնականներ Իոսիֆ Աբգարովիչ Օրբելուն և Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկուն:

Ձեկուցողը շփոթվեց:

- Իսկ ի՞նչ կա որ...

- Այն, որ այդ երկու հանգուցյալ գիտնականները, թանկագինս, սրանից երեսուն տարի առաջ այդ հարցը լուծել են: Ծնշող լռություն:

- Եվ հիմա հանդես է եկել հանգուցյալ Տոկարսկու ազգամականիցը՝ ինչ-որ պատահական մարդ, և նորից նույն հարցն է մեջտեղ բերում:

Տոկարսկին, որին ուղղված էր զայրացած նախագահի հայացքը, չգիտեր, թե ինչ ասի:

- Նիստը հայտարարում եմ փակված,-

հայտարարեց Օրբելին և տեղից ելավ ու գնաց:

○

Նշվում էր իմ ծննդյան հիսունամյակը: Արվեստի աշխատողների տան դահլիճում առաջին շաբթուն նստած էր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

Երեկոն ավարտվեց: Մոտեցավ ինձ:

- Ուրախ եմ Ձեզ համար: Հաճելի երեկո էր: Երևի ամբողջ կյանքում չմոռանամք: Կամենում եմ մի փոքր տարօրինակ թվացող բարեմաղթություն անել: Այնպիսի արժեքներ ստեղծեք, այնպիսի գործեր անեք առաջիկա տասը տարում, որ վաթսուամյակի օրերին Ձեզ անհասկանալի, նույնիսկ ծիծաղելի թվա, թե ինչու այսքան մեծարեցին Ձեզ այսօր:

○

Աշոտ Հովհաննիսյանը պաշտպանում էր դոկտորական դիսերտացիա: Պաշտպանության էր դրված «Դրվագներ հայ ազատագրական շարժման պատմության» աշխատությունը: Պաշտոնական ընդդիմախոսներն են՝ Լևոն Մելիքսեթ-բեկ, Սուրեն Երեմյան և Լևոն Խաչիկյան:

Մելիքսեթ-բեկը, բարձր գնահատելով Աշոտ Հովհաննիսյանին՝ իբրև պատմաբանի, դրվատելով պաշտպանության ներկայացված աշխատությունը, իմիջիայլոց նկատեց, թե, ճիշտ է, իր ասածը կապ չունի այսօրվա պաշտպանության հետ, բայց դիսերտանտը ծառայություն ունի և գրականության առջև, նա առաջինը է նկատել Տերյանին՝ իբրև բանաստեղծի:

Պատասխան խոսքում Աշոտ Հովհաննիսյանը, որ կարծես թե կարող էր և ընդդիմախոսի այդ հայտարարության կողքով անցնել, իրեն հատուկ կտրուկ ոճով ուղղեց նրան՝ ասելով, ոչ թե ինքն է առաջինը Տերյանին նկատել, այլ ճիշտ հակառակը՝ Տերյանն է իրեն՝ իբրև պատմաբանի, առաջինը նկատել: Ու կարդաց դրվատանքի այն խոսքերը, որ Տերյանը գրել է իր մասին. «...վերջապես երևաց մի պատմաբան, որը հեռու է հայ պատմաբանների համար այնքան բնորոշ հայրենասիրական պաթոսից»:

Եվ ավելացրեց.

- Ես զարմանում եմ, որ Մելիքսեթ-բեկին դավաճանեց իր մատենագիտական հազվագյուտ հիշողությունը:

Դահլիճը ծիծաղեց:

Մելիքսեթ-բեկը վիրավորվեց, և պաշտպանության առիթով հրավիրված ճաշկերույթին ամենքը կային, բացի նրանից:

**Ըստ Ռ. Զարյանի «Մայրամուտից առաջ» գրքի (3-րդ հատոր, 2012 թ.):**



## ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՑԱՍՈՒՄԸ

Թուրքերը դժոխային ծրագրեր էին մշակել Արևմտյան Հայաստանի ողջ հայության տեղահանման, գերեվարության և զանգվածային կոտորածների մասին և արդեն իրագործում էին դրանք գազանային անգթությամբ: Այդ ամենը մեծապես ազդել էր մեծանուն ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու վրա:

Մի անգամ առավոտյան, երբ խառնի-

ճաղանջ բազմությունը սովորականի մեծ հավաքվել էր արվեստագետի տան մոտ և անհամբերությամբ սպասում էր Այվազովսկու երևալուն, չափազանց այլալված տեսքով դուրս թռավ նրա սպասավորը և անբնական ծայրով կմկմաց.

- Օ՜, բարի՛ մարդիկ, գիտե՛ք՝ ինչ է կատարվում:

- Ի՞նչ, - զարմացած հարցրին հավաքվածները:

- Շնորհաշատ տեղը՝ Հովհաննես Այվազովսկին, հանեց սուլթանի՝ իրեն շնորհած բոլոր շքանշանները և կախեց շան վզից:

Քիչ անց երևաց նկարիչն իր շան հետ: Բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի շունը, որի լայն վզնոցից կախված օրորվում էին ադամանդներով զարդարված թուրքական շքանշանները:

Այվազովսկին իրեն ուղեկցող բազմության հետ ուղղվեց դեպի ծովափ: Երբ լողացին դեպի ծովի հեռուները, նկարիչը շան վրայից հանեց վզնոցը, կապեց մի քարից և զայրությամբ նետեց ալեծովի ծովը:

Ափ վերադառնալով՝ Այվազովսկին այսպես դիմեց բազմությանը.

- Միրելի՛ հայրենակիցներ, այս գիշեր ես արթնացա և հանկարծ հիշեցի սուլթանական գարշելի պարգևները, հասկացա, որ դրանք թունավորում են իմ տան անա-

պակ օդը և իմ անբասիր հոգին: Այժմ ես նրանցից ազատվեցի և կարող եմ հանգիստ խղճով քնել:

## ՆՈՒԲԱՐ ՓԱՀԱ

Եգիպտոսի պատմության մեջ անմոռաց էջեր է գրել նշանավոր քաղաքական-հասարակական և ազգային գործիչ, ծագումով դարաբարդի Նուբար Փաշան: Նա նշանակվել էր Եգիպտոսի արտաքին



գործերի նախարար: Այդ պաշտոնը նա վարել է մինչև 1878 թվականը, որից հետո առաջ է քաշվել և նշանակվել Եգիպտոսի վարչապետ և որոշ ընդհատումներով այդ պաշտոնը վարել 10 տարի: Մեծ ջանքեր է ներդրել Եգիպտոսի տնտեսության զարգացման գործում: Ի նշան նրա վաստակի՝ Եգիպտոսի Բեհերան նահանգի նշանավոր ջրանցքը կոչվել է Նուբարի ջրանցք: Եգիպտոսի ժողովուրդը սիրել է Նուբար Փաշային և նրան անվանել ֆելլահների հայր:

Նուբար Փաշան զբաղվել է նաև Եգիպտոսի հայկական գաղութի, ամբողջ հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի, մշակույթի և լուսավորության հարցերով: 1878 թ. Բեռլինի վեհաժողովի նախօրեին նա հանդիպել է Խրիմյան Հայրիկի հետ և վերջինիս խնդրանքով կազմել մի հուշագիր՝ վեհաժողովին ներկայացնելու համար: Զգալի միջոցներ է տրամադրել ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուսային՝ գրաբարից ֆրանսերեն թարգմանելու հայ պատմիչների երկերը:

Մի առիթով խոսելով իր ազգային ծագման մասին՝ Նուբար Փաշան ասել է. «Ես կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտն իմ առջև այդ գործը դրեց: Բայց օտար երկրի մեջ այդ գործը երբեք ինձ չմոռացրեց, որ ես հայ եմ»:

**Ն. ԿԻՐԱՔԱՆ**

## ԱՐԺԵՔԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



## ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԵՔ ՔԱՅԼ

Գուրա Մեյր, Խարայելի 5-րդ վարչապետ


«Եթե ուզում եք կառուցել մի երկիր, ուր կվերադառնան ձեր որդիները և դուստրերը, եթե ուզում եք կառուցել մի երկիր, որտեղից նրանք կմեկնեն միայն արձակուրդին, եթե ցանկանում եք կառուցել մի երկիր, որը չի վախենա ապագայի համար, ապա արեք ընդամենը երեք քայլ:

1. Կոռուպցիան հավասարեցրեք հայրենիքի դավաճանությանը, իսկ կոռուպացված պաշտոնյաներին՝ դավաճանների...

2. Երեք մասնագիտություն դարձրեք ամենաբարձր վարձատրվող ու ամենահարգվածը: Դրանք են զինվորականները, ուսուցիչներն ու բժիշկները...

3. Եվ ամենակարևորը՝ աշխատե՛ք, աշխատե՛ք և աշխատե՛ք, քանի որ ձեզանից բացի ոչ ոք ձեզ չի պաշտպանի, ձեզանից բացի ոչ ոք ձեզ չի կերակրի, և ձեր երկիրը միայն ձեզ է պետք, ուրիշ ոչ ոքի»:

## ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ



**Ամերիկացի հայտնի ծարտարագետ, գործարար, էփլ (Apple) կորպորացիայի հիմնադիր և գլխավոր տնօրեն Սթիվ Ջոբսը (1955-2011) աշխարհի ամենահարուստ մարդկանցից էր: Ի դեպ, վաղ տարիքում նրան որդեգրել են. նրան մայրություն է արել հայազգի Կլարա Ֆակոբյանը:**

**Սթիվ Ջոբսը մահացել է 56 տարեկանում: Եվ նրա վերջին խոսքերը ստիպում են բոլորիս խորհել կյանքի իմաստի մասին...**

«Բիզնես աշխարհում հասել եմ հաջողության բարձունքներին: Բայց, աշխատանքից բացի, ես քիչ ուրախություններ ունեմ: Ի վերջո, հարստությունը պարզապես կյանքի փաստ է, որին ես սովոր եմ: Այս պահին, երբ ես պառկած եմ հիվանդանոցի մահճակալին և վերիիշում եմ ապրածս կյանքը, ես հասկանում եմ, որ ունեցածս հարստությունն ու գնահատանքն անիմաստ և աննշան են մոտալուստ մահվան առջև: Դուք կարող եք վարձել մեկին, որը կվարի մեքենան կամ փող կաշխատի ձեզ համար,

## Ստեղծագործում են մեր գիտնականները

## ՄԵՐ ՉՔՆԱՂ ՀԱՅՐԵՆԻՔ



Մեր չքնաղ հայրենիք, մեր երկիր հարազատ, Դայաստան սրբազան ու անգին, Երազել ենք դարեր, որ լինես դու ազատ, Մեր աղոթքը հասավ երկնքին...

Թող նոր կյանք փառավոր զավակների բերեն, Դամախումբ գործությամբ բարձրանան, Բյուրազանձ մեր հոգով թող աշխարհը գերեն, Մարդկության մեծ երթին միանան:

Ավերի դարերում աշխարհով ցրվեցինք, Մայր լեզուն պահելով հանց երդում, Կորստի փրկության հավատով ապրեցինք, Կպահենք Մասիսը մեր սրտում:

Մեր արի արմատով ու բարի հավատով Կընթանանք դեպ հուսո հանգրվան, Աստղը մեր թող լինի անխավար, Լուսաշող, Անվախճան թող լինի մեր ճամփան...

Նորայր ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

**Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԶՅ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի բաժնի վարիչ**

## ՉԿՆՈՐՄՆԵՐԸ

Խորհրդային Միության տարիներն էին: Հրազդան քաղաքում էինք, որտեղ գործում էր Հայաստանի այն ժամանակվա ամենահզոր ջերմային էլեկտրակայանը: Մեզ 1977 թ. ամռանն ուղարկել էին այդտեղ՝ ուսանողական պրակտիկայի:

Օրերից մի օր իմ ընկեր Նորիկն առաջարկեց գնալ ձուկ բռնելու: Ես ձկնորսության հետ որևէ առնչություն չեմ ունեցել, հետևաբար՝ պարծենալ չէի կարող: Պարզվեց, որ Նորիկը նույնիսկ Երևանից իր հետ ձկնորսական սարքեր էր բերել: Խմբի ուսանողներն անհամբերությամբ սպասում էին մեր վերադարձին:

Գնացինք լիճ, որտեղ շատ ձկնորսներ կային:

Տարբեր դիրքերից փորձեցինք կարթով ձուկ բռնել: Չկա ու չկա: Բախտը երես էր թեթել մեզանից: Ժամերն անցնում էին, մեր անհամբերությունը՝ մեծանում: Ի՞նչ պատասխան ենք տալու: Մի՞թե չենք կարողանալու գոնե մեկ-երկու ձուկ որսալ:

Օրը երեկոյանում էր: Արդեն գնալու ժամանակն էր: Մենք հավաքեցինք մեր որսորդական իրերը և վերադառնալիս ճանապարհին տեսանք մի մարդու, որի արտաքին տեսքից և ձեռքի տուպրակից կարելի էր եզրակացնել, որ նրա ձկնորսությունը հաջող էր եղել:

Բարևեցի և պատմեցի մեր ձկնորսության մասին: Առաջարկեցի գնել նրա մոտ եղած ձկները: Նա համաձայնվեց: Վճարեցի հինգ ռուբլի, և նրա տուպրակի ձկները հայտնվեցին մեզ մոտ: Մթերային խանութներում այն ժամանակ թարմ ձկներ չէին վաճառում:

Մենք ուրախ-ուրախ վերադարձանք հանրակացարան: Մեր պատիվը փրկված էր: Մեր ընկերները գոհ էին, և ոչ ոք չիմացավ մեր բռնած ձկների պատմությունը:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

## ԽՈՐԻՄԱՍ ՄՏՔԵՐ

○ Գոյություն ունի զրպարտությունից ավելի սարսափելի զենք՝ ճշմարտությունը:

Շ. Թալեյրան

○ Շատ ավելի հեշտ է մոլորեցնել մարդկանց, քան համոզել նրանց, որ մոլորեցված են:

Մ. Տվեն

○ Ամենից շատ խոսում է նա, ով ասելիք չունի:

Լ. ՏՈՒՍՏՈՅ

○ Հայը նա չէ, ում պապն է հայ եղել, այլ նա, ով պապից հետո է հայ մնացել:

Գ. Նժդեհ

○ Մարդուն հարկավոր է երկու տարի, որպեսզի սովորի խոսել, և 50 տարի, որպեսզի սովորի լռել:

Է. Յենինգուել

○ Ինչքան ատելություն ու թշնամանք ունեք, գրեք սառույցին և սպասեք մինչև արևի դուրս գալը:

Ա. ԷՔՁՅՈՒՊԵՐԻ

○ Ես նախընտրում եմ մաղթել ոչ թե առողջություն և հարստություն, այլ միայն հաջողություն: Ի վերջո, Տիտանիկի վրա գտնվողներից շատերը առողջ և հարուստ էին, բայց պարզվեց, որ նրանցից քչերն են հաջողակ:

ՌԻ. ՉԵՐՉԻԼ

○ Մի՛ հարցրու, թե քո երկիրն ինչ կարող է անել քեզ համար, հարցրո՛ւ, թե դու ինչ կարող ես անել քո երկրի համար:

○ Կամ մարդկությունը վերջ կդնի պատերազմներին, կամ էլ պատերազմները վերջ կդնեն մարդկությանը:

○ Հաջողությունը բազում հայրեր ունի, իսկ անհաջողությունը որք է:

Ջ. Քենեդի

○ Եթե ուզում ես վրեժ լուծել, թուրքերի քթի տակ ստեղծի՛ր ուժեղ, բարեկեցիկ, օրինապահ երկիր, որտեղից մարդ չուզենա հեռանալ...

Պ. ՁԵՅԹՈՒՆՑՅԱՆ

## Շայտարարություն

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար

1. Մոլեկուլաբջջային իմունաբանության լաբորատորիայի վարիչի

2. Բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիայի վարիչի

3. Միկրոօրգանիզմների գենոմիկայի լաբորատորիայի վարիչի

4. Էվոլյուցիոն գենոմիկայի լաբորատորիայի վարիչի

5. Մարդու գենոմիկայի լաբորատորիայի վարիչի

6. Կենսագործընթացների համակարգչային մոդելավորման լաբորատորիայի վարիչի

7. Կենսաինֆորմատիկայի գիտական խմբի ղեկավարի

8. Բույսերի գենոմիկայի խմբի ղեկավարի

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք, որոնք ունեն համապատասխան ոլորտում գիտական աստիճան, գիտական և գիտատեխնիկական գործունեության աշխատանքային ստաժ, վերջին հինգ տարիների ընթացքում ազդեցության գործակցով ամսագրերում տպագրված հոդվածներ: Ամերիաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում ՄԿԻ-ի տնօրենի անունով

բ) անձնագրի/ՆԶ-ի և սոցիալական քարտի պատճենները

գ) երկու լուսանկար, 3X4 չափսի

դ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ

ե) ինքնակենսագրություն

զ) բարձրագույն կրթության վկայականի պատճեն

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները

ը) տպագրված գիտական աշխատությունների ցանկը: Ամերիաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացնել ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտական քարտուղարին սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Հասցե՝ Երևան, Հասարակական 7, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, հեռ.՝

28-16-26:

**ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ**

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

**խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 25.07.2023 թ.:

"ГИТЯТИОН" ("Hayka") газета НАН РА